# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
## «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28 դեկտեմբերի 2018թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Շաբոյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հ. Թադևոսյան, Լ. Միքայելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Շեկոյան:

**1. «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, հայտերի ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /ընթացակարգի արդյունքների ամփոփման/ մասին.**

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 2018թ դեկտեմբերի 18-ին գնման ընթացակարգ է հրապարակվել www. *eauction.armeps.am* կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է gnumner.am պաշտոնական կայքում:
1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ընդունման վերջնաժամկետ հաստատված է եղել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը, ժամը՝ 12:00-ն : Հակադարձ աճուրդը սկսվել է սկսվել է 2018 թվականի դեկտեմբերի 28-ին ժամը՝ 12:00-ին www. *eauction.armeps.am* կայքի միջոցով:
1.3 Հայտեր էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Մասնակցի անվանումը | Հայտերի գնահատման արդյունքները /համապատասխանելու դեպքում նշել "X"/ |
|---|---|
| «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ | X |
| «Յուքոմ» ՍՊԸ | X |

1.4 ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2019 թ. կարիքների համար տվյալների հաղորդման մեծածախ (տհմ) ծառայությունների ձեռքբերման նպատակով էլեկտրոնային աճուրդով կազմակերպված «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան կազմված հայտերի հիման վրա Մասնակիցների առաջարկած գները՝

| N | Ընկերություններ | Չափաբաժին 1, տվյալների հաղորդման մեծածախ (տհմ) ծառայություններ **նախահաշվային գին - 0** /«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետ / | | |
|---|---|---|---|---|
| | | | Առանց ԱԱՀ գին | Ընդհանուր գին |
| 1/1 | «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ | **Վերջին առաջարկ** | 1000000,00 | 1200000,00 |
| | | **Նախնական առաջարկ** | 2220000,00 | 2664000,00 |
| 1/2 | «Յուքոմ» ՍՊԸ | **Վերջին առաջարկ** | 1380000,00 | 1656000,00 |
| | | **Նախնական առաջարկ** | 5000000,00 | 6000000,00 |

«ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով ԷԱՃ կազմակերպված ընթացակարգի բոլոր մասնակիցներն գնային առաջարկը ներկայացրել են ԱԱՀ-ն ներառյալ:

2. ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար 2019թ. ընթացքում տվյալների հաղորդման մեծածախ (տհմ) ծառայությունների ձեռքբերման նպատակով էլեկտրոնային աճուրդ

գնման ձևի միջոցով կազմակերպված «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի գնահատման ընթացքում **հանձնաժողովը որոշեց՝**

2.1 «ՀՀ ԿԵ ՍԱՏՄ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել ընթացակարգի մասնակից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից :

2.2 Eauction.armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին:

2.3 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում (Հավելված 4) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

Նախագահ՝ ............................ Ա. Շարոյան

Քարտուղար՝ ............................ Հ. Շեկոյան

Գնահատող անդամներ՝

1. ............................ Հ. Թադևոսյան

2. ............................ Լ. Միքայելյան